



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

3 դեկտեմբերի 2021 թվականի թիվ 196-Ս

ք. Երևան

#### ԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՍՓՈՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 44-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասերի, 60-րդ հոդվածի 14-րդ մասի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2021 օգոստոսի 10-ի թիվ 01/11.1/4601-2021 գրությունը և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 170-Ա որոշումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. 2021 թվականի դեկտեմբերի 3-ին հայտարարել լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային՝ ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքում սփռման մրցույթ:

2. Հաստատել լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մրցույթի մասին տեղեկատվությունը՝ համաձայն Հավելվածի:

3. Հրապարակել մրցույթի մասին տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների [www.azdarar.am](http://www.azdarar.am) և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի [www.tvradio.am](http://www.tvradio.am) պաշտոնական ինտերնետային կայքերում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկմանը հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

### ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

#### Լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային սփռման մրցույթի մասին

1. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը՝ լսողական ծրագրի հաճախականության օգտագործում:
2. Սփռման տարածքը և հաճախականությունը՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր՝ 94.7 ՄՀց, ք. Վայք՝ 99.7 ՄՀց և ք. Ջերմուկ՝ 97.1 ՄՀց:
3. Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում է՝
  - 1) հայտ (ձևը կցվում է),
  - 2) փաստաթուղթ՝ լսողական մեդիաձառայություն մատուցողի նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ,
  - 3) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր,
  - 4) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների վերաբերյալ,
  - 5) տեղեկություններ աշխատակազմի քանակի, նրանց կրթության և մասնագիտության վերաբերյալ,
  - 6) էթիկայի կանոնագիր,
  - 7) էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները,
  - 8) մրցույթին մասնակցելու համար 900005164588 հաշվեհամարին «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված 150 000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը:
4. Հայտին կից փաստաթղթերը ներկայացվում են երեք նույնական փաթեթով՝ յուրաքանչյուրը թելակարված, համարակալված, վերջին թերթի հետնամասում, կարի վրա փակցված պիտակով՝ «Բաղկացած է ... թերթից» գրառմամբ («...» նշվում է թերթերի քանակը), ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում): Փաթեթները ներկայացվում են փակ ծրարով՝ ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում):
5. Հայտերն ընդունվում են 2022 թվականի հունվարի 3-ից մինչև հունվարի 24-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00-18:00-ն: Հայտերը և կից փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով՝ ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 28 հասցեով:
6. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 010 52 94 06 հեռախոսահամարով կամ գրել [licensing@tvradio.am](mailto:licensing@tvradio.am) էլ. փոստի հասցեով:

\_\_\_\_\_ին  
(անուն, ազգանուն)

**Հ Ա Յ Տ**

**Լսողական ծրագրի հաճախականության օգտագործման  
լիցենզավորման մրցույթին մասնակցելու**

Հայտատուի անվանումը \_\_\_\_\_

Գտնվելու/հաշվառման վայրը \_\_\_\_\_

Պետական գրանցման/հաշվառման համարը \_\_\_\_\_

Հեռախոսահամարը, էլ. փոստի հասցեն \_\_\_\_\_

Միման տարածքը \_\_\_\_\_

Տեղեկություն հեղինակագործման վերաբերյալ \_\_\_\_\_

Հաստատում եմ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 15-րդ հոդվածում նշված սահմանափակումների բացակայությունը:

Կից փաստաթղթեր՝ \_\_\_\_\_ թերթ:

Հայտատու \_\_\_\_\_  
(անուն, ազգանուն)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

Կ.Տ. (կնիքի առկայության դեպքում)

\_\_\_\_\_  
(օրը, ամիսը, տարեթիվը)